

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ՍԻՓԱՆԱ ՔԱՋԵՐԸ

(Բանախօսութիւն կարդացուած երգի ուսուցման առիթով)

- Այո՛ տղայք, այս՝ ձեզ քան ծանօթ «Լո-լոն»՝ այսինքն յայտնի «Բեզըրգյան Բեյի» քայլերգն է: Երրորդ լսարանի տղայքը հաւանօրէն կը յիշեն, թէ ինչպէս իմ Գերմանիա գնալուց առաջ, վերակացու պրն. Ազնաւորեանի գլխաւորութեամբ, հաւաքուում էին երեկոները հիւսիսային դռան առջեւ եւ ուրիշ երգերի շարքին երգում էին այս երգը առանց բառերի, որովհետեւ այդ եղանակը քրդական լինելով՝ միայն սրինգով են նուագում: Մեր սիրելի պրն. Մ. Արեղեանն էլ խանդավառուելով եղանակով, իր պատանեկան գրչով բառեր գրեց այդ եղանակի համար: Երգը ժողովրդականացաւ, մանաւանդ պատանի սերունդը սիրով էր երգում դպրոցական պտոյտների գնալու կամ վերադառնալու ժամանակ՝ խանդավառուելով բոլոր տեսնող-լսողներին: Ինչպէս ձեզ, այնպէս էլ ինձ այդ եղանակը շատ է շահագրգռել, սակայն ոչ այդ բառով: Եւ ահա ես խնդրեցի իմ սիրելի պաշտօնակցից, որ մի օր նստենք եւ բովանդակութիւնը հայացնելու աշխատենք, եւ արինք:

Ինչպէս գիտե՞ք, նախորդ բառերով քուրդ աշիրեթներն են, որ Սիփանա սարի շուրջ իրար դէմ են դուրս գալիս եւ իրար գլուխ ուտում: Վերամշակուածի մէջ դարձեալ քուրդ աշիրեթն է յարձակուողը Սիփանի լանջերէն, մի հայ գիւղի վրայ: Հայ կտրիճները գիշերուայ լուսեան մէջ թշնամու յարձակուելու լուրն առնելով, իրենց նժոյգները հեծած, թշնամու դէմ են ելնում եւ նրանց երազած առատ աւարի փոխարէն իրենց առատ արիւնով սէգ Սիփանա լանջերն են ոռոգում,

դիակներով գետինը ողողում են եւ մնացածներին ողջ կամ հաշմանդամ՝ անմոռանալի դասով իրենց տները ուղարկում: Դուք գիտե՞ք, թէ դարեր շարունակ, մանաւանդ տանկահայ անգէն գիւղացին ոչխարի պէս մորթուելն էր իմանում, աննարակութեան մէջ ինքն իրեն ուտելով, մորմոք սրտով իր գոյքն ու սիրելիները աչքի առջեւից յափշտակուելն ու տարուելն էր դիտում: Տանկական բռնակալութեան տակ հեծող բալկանեան ժողովուրդները, սրանից հազիւ քառորդ դար առաջ տեսան, որ բաժակը լցուել է, մարդ ասածը չի կարող համբերել, ոտքի ելան եւ գէնքի ուժով, Եւրոպայի քրիստոնեայ մեծ պետութիւնների օգնութեամբ, նուաճեցին իրենց անկախութիւնը: Հայ եկեղեցականը, հայ քնարը, հայ գրիչը ի տես այդ բոլորի, այլեւս չէին կարող անվերջ արցունքոտ աչքերով, տոչորտոչ սրտով սոսկ դիտողի դերի մէջ մնալ: Զեզնից շատերը գիտեն, որ եկեղեցիների բեմից էլ նոր քարոզ հնչեց յանձին մեր Վեհ. Հայրիկի՝ հռչակաւոր «հարիսայի»: Դա բանաստեղծ աշուղների լալկան քնարները ռազմի շեփորներով փոխարինել տուեց, նրանց ռազմի կոչերը ազատութեան անձնուրաց խմբեր հանեցին կարճ ժամանակի մէջ Տաւրոսի, Սասնոյ լեռների վրայ, ինքնապաշտպանութեան դրոշմներ ծածանելով այդ քարոզներէն: Ի տես այդ զարթօնքի, մենք չէինք կարող վանքի պարիսպների ներսը փաշտել, 1895 թուից այս կողմը հարիւր-հազարաւոր գաղթականութեան սիրտ պատռող ողբն ու կոծն ենք լսել ու տեսել եւ միապաղաղ շարական ու գեղջկական սիրոյ երգեր լսել ու լսեցրել:

Մենք էլ թող «Հիմի էլ լռենք», «Հայ մեռնիմք» կողքին մեր այս «Սիփանա ֆաջերով» մեր տուրքը տուած լինենք ինքնապաշտպանութեան գաղափարին:

Այսօր երգի վերամշակուած քովանդակութեան մասին, որ իր առանձին կարեւորութիւնն ունի: Այժմ գանձ նորա երաժշտական զգեստաւորմանը: Թէ՛ երաժշտութիւնը եւ թէ քովանդակութիւնը մի երաժշտի համար մեծ խայծ է սիմֆոնիկ գործի համար մտածելու, թերեւս ոչ այս բառի նեղ ու խիստ իմաստով:

Բայց «Սիփանա ֆաջերը» այդպիսի խայծ չէ միայն, նա իբրեւ յօրինուած իր գաղափարականով, իր միջավայրով, գործողութիւններով, յուզմունքներով ու ալեկոծութիւնների տեսարաններով յաղթանակի ու խրախճանքի յաջորդականութեամբ եւ այդ ամբողջի տարողութեամբ, երաժշտի առջեւ շատ լուրջ խնդիրներ է դնում, եւ այդ ոչ միայն մարդկային ձայնով լուծուել չեն կարող, այլեւ նուագարաններ է պահանջում, որից մենք առայժմ զուրկ ենք: Եւ որովհետեւ զուրկ ենք, պէտք է առաւել եւս ուժ տանք այսպէս կոչուած «ա կապելլա»՝ այսինքն անգործի խմբական երգեցողութեան իմաստաւոր արտայայտութեանը, որն իր հերթին ունի իր գնահատելի առաւելութիւնները: Այսպէս թէ այնպէս, «Սիփանա ֆաջերը», ինչպէս ասացի, իր համեմատական բարդութեամբ մեզ զբաղեցնող երաժշտական այն կտորը կը մնայ, որ ամենից աւելի հեշտութեամբ կարող է պարզել, թէ մեզնից, հայ երաժիշտներիցս, պահանջում է եւրոպական դասական երաժշտութեան էութեան եւ պահանջների խոր եւ լայն ճանաչողութիւն: Մի անգամ էլ շեշտելով այդ անհրաժեշտութիւնը, անմիջապէս պիտի աւելացնեմ. վա՛յ մեզ. հայ երաժիշտներիս, եթէ

տիրանալով եւրոպական դասական երաժշտութեան էութեան եւ նրա կերպաւորման օրէնքներին, կանոններին, անգիտանա՞նք, որ մեր ազգային երաժշտութիւնն էլ ունի իր առանձնայատկութիւններն ու սրանցից բխող կանոններն ու պահանջները: Նրանց կուրօրէն եւրոպականով փոխարինելը կը լինի մեծագոյն մեղանշումը, ինչ որ մեր երաժշտութեան զարթոնքի շէմին շատ անգամ է կատարուել եւ վախճնում եմ, որ դեռ կը կատարուի: Այդ վտանգը սպառնում է մեզ ոչ միայն «Լո-լոյի» պէս բարդ, այլեւ ամենապարզ ժողովրդական երգերը բազմաձայնելիս:

Գալով ժողովրդական երգերի մշակութեան, այդ հարցի ֆննարկումը կը թողնենք ապագային, նախ «Սիփանա ֆաջերի», ըստ հնարաւորութեան, բազմակողմանի ֆննարկման վրայ կանգ առնենք: «Լո-լոյի» կամ «Սիփանա ֆաջերի» այդ ֆննարկութեան ժամանակ էլ մենք այն դէպքում հնարաւոր մեծագոյն արդիւնքին կը հասնենք, երբ մենք սկսենք այն՝ եւրոպական երաժշտութեան զարգացման, վերջինիս ազդակգործօնների, ստեղծուած դպրոցների վրայ մի ակնարկով, որ անհրաժեշտ է ոչ միայն ամէն մի երաժշտասէրի, այլեւ ամէն մէկին, որն ընդհանուր զարգացման է հետեւում:

Ամենից առաջ պէտք է իմանա՞նք, որ իբրեւ որակաւոր՝ այն ժողովուրդների երաժշտութիւնն է ճանաչուած, որ նոյն այդ ազգի ժողովրդական երգերի շունչն ու ոգովն է հագեցուել: Բեռլինի իմ ուսանողական կեանքում ես առաջին անգամ մեծ գնահատականի արժանացայ, երբ պրոֆեսորս իմ փորձ կոմպոզիցիայի հիմքում հայ ժողովրդական երգը նշմարեց:

Առաջին հարցը, որ ծագում է

այս փնտռտուփների ընթացքում, այն է, թե ինչո՞վ բացատրել ազգային-ցեղային երաժշտութիւնների ուրոյն կառուցուածքի այսպիսի կամ այնպիսի կերպաւորումը, երանգաւորումը: Պատասխանը կարող է հետեւեալը լինել:

- Մի շարք ազդակներով:

Ինչպէս իւրաքանչիւր ցեղի կամ ազգութեան ֆիզիքականը եւ հոգեկանը ամենից առաջ աշխարհագրական-տեղագրական կլիմայական միջավայրով է պայմանաւորուում, այնպիսի էլ այդ կարեւոր դեր է խաղում մարդկանց հոգեկանի, զգացումների, զգտումների, երաժշտական ճաշակի ձեւաւորման հարցերում:

Տարօրինակ պէտք է լինէր, եթէ Միջերկրականի եւ մասնաւորապէս Իտալիայի մշտնջենական ջինջ երկինքը, նրա վերելքը նաւող մշտապայծառ արեւը, վերջինիս առատօրէն ջերմութիւն սփռող ոսկի ճառագայթները, նրա հրաշագեղ, երկրային բարիքներով լի բնութիւնը, ալեծածան ծովը՝ իր ցամաք փայփայող զովացուցիչ գեփիւռով, այնտեղ ծնունդ ու սնունդ մարդու հոգեկան կառուցուածքի, նրա զգայական կեանքի վրայ խոր ազդեցութիւն չգործէր: Ուստի, Իտալիա այցելող զբօսաշրջիկ բանաստեղծը, նկարիչը, երաժիշտը չի կարող չտարուել, արբել նրա ժողովրդի կենսախիւնը նկարագրով, նրա անվերջ, իր շրջապատը պարուրող այր թէ կնոջ ոսկեհիւնիւն երգերով:

Եւ վերջապէս, մի՞թէ պատահականութիւն կարող է համարուել այն, որ Իտալիան մարդկութեանը տուել է ոչ միայն Կարուզոյի եւ Ջիլիի պէս աննման տենորներ, Ջուզեպպե Վերդիի եւ Լեոնկավալլոյի պէս աշխարհի բեմերը զարդարող հոգեպարար օպերաներ ստեղծագործող կոմպոզիտորներ, այլեւ այն, որ մի տասնեակ տարի առաջ

Իտալիան ամբողջ աշխարհի միակ կոնսերվատորիան էր, ուր վազում էին աշխարհի ամէն ծայրերից այրեր ու կիներ իրենց ապագայ խոստացող ձայները Ֆլորենցիայի ու Միլանի կոնսերվատորիաներում մշակել տալու, նկարչական տաղանդները նոյն այդ փառքների Արուեստից ճեմարաններում հմտութիւն ձեռք բերելու, իրենց վրձիններին հռչակ ապահովելու յոյսով: Ես ինքս թէպէտ գերմանո-սաֆոն դպրոցը դիմեցի երաժշտութեան մէջ կատարելագործուելու համար, սակայն մինչ այդ, իբրեւ արեւալառ Հայաստանի ծնունդ, միակողմանիօրէն իտալական երաժշտութեան երկրպագու էի:

Ո՞վ կարող է ասել, թէ գերմանացին հպարտ չէ իր մութ-կանաչ անտառներով, տեղտեղ շրջապատուած լեռներով, գետերով ու լճերով: Երկինքը շատ անգամներ է մթագնում եւ օրը ցերեկով է՛լ աւելի մոռայեցնում առանց այն էլ մոռալ մթնոլորտը: Բայց երբ արեւը յաղթում է ամպին ու մշուշի թանձր վարագոյրը, եւ անհետացնում է նրա հետքերը, ո՞վ կարող է ժխտել նրա գեղեցկութիւնը: Նոյնը կարելի է ասել է՛լ աւելի հեռաւոր Գրիգի ծայրագոյն հիւսիս նետուած Նորվեգիայի համար, իր մթնաշունչ բնութեամբ անհամար կտրուած ֆյորդներով, խոր կապուտակ լճերով բնութեան մասին:

Այդ երկիրներն ամէն ժամանակ եւ միանգամից իրենց վրայից դէն չեն գցում մոռալ բողբոջայեղ զբօսաշրջիկի աչիւն, իրենց գեղեցկութիւնը լրիւ յայտնագործելու համար: Մինչ արեւաթաթախ Իտալիայի ձմեռը մշտականաչ զգեստաւորումով, նարինջներով ծանրաբեռնուած ծառերը՝ իրենց կանաչ ու դեղնակարմիր զարդերով գարունամառուանից չեն տարբերում, մինչդեռ հիւսիսային գօտին՝ գարնան թէ ամրան

օրը մի քանի անգամ մոայլում է իր դէմքը, մոայլելով իր ծոցում ապրող մարդու դէմքը, կննիո կուտակում նրա նակատին: Միեւնոյն արեւը այստեղ ամրան իսկ օրերին, շաբաթներով եւ նոյնիսկ ամիսներով սպասել է տալիս նոյն այդ հիւսիսի մարդուն դէմքը պայծառացնելու, նակատի խորշումները փոքր-ինչ հարթելու համար:

Ձմեռը, որն իր սպիտակ պատանֆով՝ իւրայատուկ գեղեցկութեամբ է պարուրում ամբողջ շրջապատը, միեւնոյն ժամանակ դող ու սարսուռ է բերում իր ծոցում բնակուող մարդուն, այդ զարմանահրաշ գեղեցկութեան մահաշունչ պաղութեամբ, սննդի ու ջերմութեան դառը հոգսերով, նորից կննիոներով է ծածկում հիւսիսի մարդու նակատը, նրա տակ պարուրուած միտքը, ահաբեկուած հոգին ու նրան կէս ընդարմացրած՝ գլորում ոչ միայն այդ բոլորից պաշտպանուելու մտորումների անդունդը, այլեւ ուղեղը տֆնցնում այն հարցով, թէ այդ ի՞նչ դիւային խաղ է, որ խաղում է իր հետ այդ հրաշագեղ սպիտակով պարուրուած նոյնֆան էլ դաժան բնութիւնը: Եւ ահա ինչպէս պատահումնի՜ չէ, որ Իտալիան մարդկութեան էլ ամենակենսախինդ, ամենաջերմաշունչ, ամենաաւիւնոտ երգիչ-երգչուհիներն է տուել, այնպէս էլ անվերջ խորհելու, առեղծուածներ լուծելու դատապարտուած հիւսիսի մարդկութիւնն էլ նոր դարի մեծագոյն փիլիսոփաներն է տուել, նրա երաժիշտներ Բեթհովեն-Վագներ-Գրիգ՝ Հիւսիսի երաժիշտներ էլ անշուշտ ծնուած ու սնուած լինելով միեւնոյն միջավայրում, օժտուած պիտի լինէին նոյն փիլիսոփայական նկրտումներով ու տրամադրութիւններով: Ինչպէ՞ս կարելի է, օրինակ, մի հակիրճ ու հասկանալի բնորոշում տալ Վագների

երաժշտական փիլիսոփայութիւնը:

Վագներն իր երաժշտութիւնը կառուցել եւ շաղախել է միեւնոյն մտորումով, այն է՝ կեանքը միայն խինդ ու վայելիք չէ, այլեւ ահեղ, գօտեմարտ է բնութեան արհաւիրքներ ծնող, սով ու հիւանդութիւններ բերող երեւոյթների, ինչպէս նաեւ մարդկային նենգ չարութիւնների դէմ: Ինչպէս բանաստեղծը կամ վիպասանը բարութիւն, գեղեցկութիւն, նշմարտութիւն, հոգու վեհութիւնը պատկերացնելու համար այն բառերն ու արտայայտութիւնները չի գործածում, ինչ բառեր ու արտայայտութիւններ է գործածում չարութիւն ու բռնութիւն, անգիտութիւն, տգեղութիւն, խաբեքայութիւն ու նենգութիւն կամ դաւաճանութիւն պատկերացնելու համար, այնպէս էլ երաժիշտը պէտք է գտնի այն եղանակը եւ այն դաշնաւորումը, վերջիններս էլ տայ այն ձայներին ու գործիքներին, որ լաւագոյն պատկերաւորեն թուած երեւոյթներն ու յատկութիւնները: Առնենք նկարիչը: Եթէ նա նպատակ է դրել իրեն՝ մի աղֆատ ընտանիքի մարդկային թշուառութիւնը պատկերացնելու, ապա նա իր մտքովն իսկ չի անցկացնի այդ ընտանիքի բնակարանը մարմարի պատերով ու սիւներով, բնակիչներին բեհեզի ու թաւիշէ զգեստներով ներկայացնելու: Իր բուն նպատակին հասնելու համար նա այն կը ներկայացնի կիսաֆանդ տուն, բնակիչներին՝ ցնցոտիների մէջ, իսկ սրանք էլ պատկերացնելու համար նա վառ գոյների մէջ չի թաթախի իր վրձինը այլ կ'օգտագործի անհրապոյր մոայլ գոյները:

Հերթը հիմա գալիս է մեզ հետաքրքրող բուն առարկային՝ երաժշտութեանը եւ նրան սպասարկող երաժշտին: Երաժշտութեան նպատակը

միայն ունկնդիր բազմութեանը գմայլեցնող, վերացնող հնչիւնների համադրութեամբ լեռ ու դաշտ հրդեհող արշալոյսի ու վերջալոյսի նկարագիր տալը, եւ կամ գեղածիծաղ առաւօտ ու ծաղկաւէտ բուրաստաններ արտայայտելը, սէր, երջանկութիւն պատկերացնելը չէ: Կեանքը միայն երջանիկ գոյգեր միացնող հարսանիք չէ, այլ միեւնոյն պատերի միւս կողմը մարդկային ողբերգութիւնների ամենասրտակեղեք տեսարաններ կան, ուր մարդկային գազանութիւններից ծնունդ առած պատերազմներում հոսեցրած արեան ճապաղիքների մէջ հարիւրաւոր հոգիներ են գալարւում, գէնքերի որոտն ու շաչիւնը, հրդեհուած, կործանուող շէնքերի տակ թաղուողների աղիողորմ ճիչերն են հնչում: Երաժիշտը չի կարող լրիւ իր արուեստին տիրացած նկատուել, եթէ խուսափի եւ համապատասխան հնչիւնների համադրութեամբ չպատկերի կեանքի բոլոր կողմերը, պէտք է ասել եւ այն, որ եթէ կան երաժիշտներ, որոնց խառնուածքը այդպիսի ստեղծագործութիւնների համար չէ, նրանք ստեղծուել են միմիայն մարդկային ականջը շոյող, ախորժալուր երաժշտական գործեր արտադրելու, շրջապատող բնութիւնը նրանց հոգիները այդ սեռի արտադրութիւնների համար է կառուցել, ապա երկրագունդը ինքը խուսափելով այդպիսի միակողմանիութիւնից՝ իր վրայ երկրամասեր է ստեղծել, որոնք, իրենց յատուկ գեղեցկութիւնների հետ միասին, մարդկային տիպարներ են ձեւակերպել իրենց գրկում, որոնց բնութիւնը նրանց մղում է նաեւ կեանքի մռայլ կողմերը տեսնելու, նրանց մէջ խորասուզուելու եւ այդ երեւոյթները, երաժշտական գործիքների օգնութեամբ, համապատասխան երաժշտական տարրերի ընտրութեամբ, կատարել կերպով պատկերացնելու, իսկ կատարելութիւնը ինքնին գեղեցկութիւն

է եւ իւրայատուկ վայելքի աղբիւր: Եւ որքան յատկանշական է, առաջին հանճար երաժիշտը, որ այդ ուղին բռնեց, ծագումով Իտալիայի անմիջապէս հիւսիսի եւ Գերմանիայի հարաւի ծնունդ աւստրիացի Վան Բեթհովենը, զգոյշ ֆայլերով առաջ շարժուեց, թէեւ չմերժուեց հարաւից, սակայն աւելի ջերմօրէն ընդունուեց հիւսիսից: Մինչդեռ հիւսիսի զաւակ Ռիչարդ Վագները յափշտակուած իր նախակարապետ-ուսուցչից, շատ աւելի համարձակ ու որոշակի ֆայլեր նետեց սկսուած ուղիով: Եւ ի՞նչ եղաւ հետեւանքը.- իր առաջին եւ հետեւող գործերը սուլոցներով ընդունուեցին Փարիզում, միառժամանակ նաեւ իր հայրենիքում՝ Գերմանիայում: Ինչո՞վ կարելի էր բացատրել այս վերջին իրողութիւնը, նրանով, որ հիւսիսի ժողովուրդները մինչեւ այդ զուտ իտալական-ֆրանսիական ախորժալուր եւ հեշտամարս երաժշտութեամբ էին սնուել: Անշուշտ դրանից քիչ առաջ տեղի ունեցած ֆրանկ-գերմանական պատերազմի ստեղծած մթնոլորտն էլ կարելի էր իրրել նպաստաւոր վայրկեան նկատել:

Ամփոփելով՝ ասենք, որ երաժշտութեան արտայայտութեան եղանակը, ոգին կախումն ունի բնութիւնից: Իսկ ինչ վերաբերում է բովանդակութեանը, դա կախուած է ժողովրդի կեանքի պայմաններից: Քրդերը իբր լեռնական, ունեն մի երաժշտութիւն, որը զօրեղապէս կրում է բնութեան կնիքը: Իսկ իբրեւ թափառաշրջիկ եւ խաշնարած՝ ֆրդերի երաժշտութիւնը անկայուն է եւ պտտուում է ոչխարների եւ այծերի շուրջը: Սրան իբրեւ օրինակ բերենք Լուր-դալուրի յայտնի աւանդութիւնը, ուր մի հովիւ իր աղայի աղջկան տիրանալու համար սրինգի նուագով ոչխարներին է դիւթում:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ